

քի: Մարգարէն ծաղկի օրինակով արդէն կանխաւ արժանաւոր կերպով պատկերեր է մարդո՝ վաղանցուկ կեանքը:

Հմտ. նորա շարունակութիւնը:

Էջ 85. տող 17. «Եւ այսու ամենայնիւ մինչդեռ զուարճացեալ վայելէր՝ յանկարծակի վաղարկի հասանէ ի թշուառութիւն, վատէ ի զօրութենէ, անկանի ի կենաց, ծնկի ծիւրի, հիւանդութեամբ քեռանի, յաղթի և թերեւս սակաւակեաց աւուրբք վճարի»:

Ուղղ. «Յտղիկ»:

Թողախտաւորին արդէն տիրել է հիւանդութիւնը, կամ ըստ ռամկաց բացատրութեան բազաւորեր է, այնուհետեւ կեանքը երթալով կը մաշի, կը տանջուի և կը քայքայուի (յաղկի) և սակաւօրեայ կը մեռնի ծաղկահասակ երիտասարդը. ըստ Անտոնեանց օրինակի «ծնկի ծիւրի հիւանդութեամբ քեռանի յախտի» (Տես Նորայրի Բառաքան. էջ 64):

Էջ 86. տող 24. «Եւ ահա այլ զԴՆԷ ևս Յետ այսր ամենայնի գայցէ հասակիցէ ի վերայ հպարտացեալ աչաց ամբարտաւանին, յանկարծակի ի միում գիշերի հասանի ցաւ յանկարծակի իբրեւ զնետ մոյրական, և քերմ և տենդ տապախառն իբրեւ զհուր բորբոքեալ հնոցի»:

Ուղղ. «Եւ այլ զԴՆԷ ևս յետ այսր ամենայնի... յանկարծակի ի միում գիշերի հասանէ (յանկարծակի կրկնուած է) իբրեւ զնետ մոյրական...»:

Ս. Բարսեղ նախ տալով բռնաւորի նշանակարութիւնը, ինքն իրեն կը հարցնէ թէ այդ բոլոր բաներէն յետոյ ի՞նչ կըլնայ պատահիլ ամբարտաւանին, վրայ կը բերէ թէ ինչպէս մէկ գիշերուան մէջ ցաւը կը դաշի անոր՝ իբրեւ նետ մոյրական որ հուժեղ բազկէ արձակուած անվերջ ահա հարաւ կը խրի թշնամուր մարմնոյն մէջ: Իսկ մոյրական նետը կը ցնդի յօդս և կը վրիպի նպատակէն:

Էջ 87. տող 9. «Չի եթէ ի ներքուստ յարմատոցն արձակիցի բոյսն, գայ յետ նորին դաւարին, իբրեւ զեղեգան և զսիւղոյ. սակայն նախ ի բոյսն է կարօտոռ»:

րիան, և եթէ ի սերմանէ արձակիցէ բոյսն, գայ յետ նորա դաւարին, և ապա կարգի ի խոտ»:

Ուղղ. «Կարողորիան... արձակիցի»:
Սերմի մէջ ներփակեալ է բոյսն յորում է կարողորիան բուսականութեան, ուստի երբ հողի մէջ կը բացուի սերմը, բոյսն արձակուելով կը կանաչանայ և խոտ կը դառնայ:

Էջ 87. տող 33. «Եւ այսպէս ի սակաւ բուսոյն՝ ի կատարեալ չափ սերման գան ամենայն սերմանիք, որ պատշաճեալ են ի բոյս և յաճումն»:

Ուղղ. աճումն:

Սերմանիք՝ բուսցնելու համար են, իսկ բուսնելուն կը յաջորդէ աճումն ինչպէս հեղինակս իսկ կ'ըսէ. «Սերմանիք պատշաճեալ են ի բոյս և յաճումն»:

Էջ 87 տող 38. «Եւ արդ երկոցեան իբրեւ, ճախարչոյս բոյսն և յետոյ պատմական սերմանեաց առհասարակ սքանչացուցանեն, յորժամ միտ եղեալ մեղմով նաւ յիցիս»:

Ուղղ. պատմական սերմանց: Առաջին զարմանալի է՝ ցօղ ցորենոյ՝ որ ծնկակապ կապօք իբրեւ հանգոյց հանգոյց կապուած է, հաստատութեան, ամբողջեան համար, իսկ երկրորդ զոգածեւ փոճուկը հասկի մէջ, պահպանելու համար՝ սերմը իբրեւ պատան, իբրեւ ամբաժածուկ պատնէ՛ մը՝ թշնամիներու դէմ:

Հ. Գ. ՆԱԶԱԳՅԱՆ

Շարայարեկի

“IMPALUDISME” Ի ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

— Հ. Կ. Տ. Ս.

«Ծառից» բառիմ համարժէք Եղիւր բառն ամեաճօթ էր թիմ, և արդէն դովաւ ամաց մը «Եղիւրիսխտ» շատ ամենիզաշմակ է:

«Երբ» բառով խորհած էի դարձմն, սակայն չէի յանգումս կասկածելով թէ՛ Մայր բառն ամացեալ պիտի եմթաղորով, իբրեւ ֆրամսերէմ mal de mordre ի թարգմանութիւմ Ժօր ցաւ. Սակայն եթէ այդ շփոթութիւն չէր կարծեք որ տեղի ունեւմայր՝ սիրով կը գեղըմտրեմ Երբախմ՝ ճահահաբարբորոս հիմամբ բառէմ.

Տեսմենք ի՞նչ պիտի ըսէ իմ հայկաբաժն արուեստակիցս տիւր Սմբ. Գարբիւնեան.

— Տ.